ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 5769-Ա « 24 » նոյեմբերի 2026թ.

ԱՋԱՓՆՅԱԿ, ԱՐՋՈՒՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ.10 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՃՇՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԻԾ ԹՈՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել ՀՀ կառավարության 2023 թվականի ապրիլի 13-ի «Երևան քաղաքի Արզումանյան փողոցի 10 և 17 շենքերի և հարակից տարածքների նկատմամբ հանրության գերակա շահ ճանաչելու, ներդրումային ծրագրին հավանություն տալու և համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասերն ուղղակի վաճառքի ձևով օտարելուն համաձայնություն տալու մասին» հ.530-Ն որոշումը, «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի գրությունը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության հ.Ն/48717-26 եզրակացությունը, Երևան համայնքի անվամբ գրանցված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականները /03072024-01-0349, 11062024-01-0063, 11062024-01-0263, 25062024-01-0152, 11062024-01-0272, 21062024-01-0221, 14062024-01-0089, 11072024-01-0435, 10082026-01-0065, 18102026-01-0027, 25062024-01-0050, 25062024-01-0341, 25062024-01-0231, 06052026-01-0357, 04072024-01-0241, 17072026-01-0380, 27062024-01-0360, 10122025-01-0271, 14062024-01-0203, 03072024-01-0412, 25062024-01-0120, 25062024-01-0358, 25062024-01-0045, 02092025-01-0332, 27062024-01-0382, 25062024-01-0177, 25062024-01-0357, 27102025-01-0082, 03072024-01-0416, 24072024-01-0399, 13062024-01-0063, 14062024-01-0190, 07052026-01-0241, 09092024-01-0227, 10092024-01-0206, 14062024-01-0263, 27062026-01-0014, 24072024-01-0307/ և ՀՀ կադաստրի կոմիտեի ԱՏ-22102026-01-2031 տեղեկանքը:

ՀՀ կառավարության 2023 թվականի ապրիլի 13-ի «Երևան քաղաքի Արզումանյան փողոցի 10 և 17 շենքերի և հարակից տարածքների նկատմամբ հանրության գերակա շահ ճանաչելու, ներդրումային ծրագրին հավանություն տալու և համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասերն ուղղակի վաճառքի ձևով օտարելուն համաձայնություն տալու մասին» հ.530-Ն որոշմամբ Երևանի քաղաքապետարանը պարտավորվել է Արզումանյան 10 շենքի սեփականության օտարման գործընթացի ավարտից հետո հաստատել նոր միասնական գլխավոր հատակագիծ՝ Արզումանյան 10 հասցեում 3896.0քմ մակերեսով հողամասի համար:

Տեղագրական հանույթի ճշգրտման արդյունքում պարզվել է, որ Աջափնյակ, Արզումանյան փողոց հ.10 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի փաստացի մակերեսը կազմում է 3896.0քմ:

Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 10-ի հ.204-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի նոր գլխավոր հատակագծի համաձայն՝ քննարկվող 3896.0քմ մակերեսով հողամասից 969.45քմ մակերեսով հողամասը գտնվում է բնակավայրերի նպատակային նշանակության՝ բնակելի կառուցապատման հողերի, իսկ 2926.55քմ մեկերեսով հողամասը՝ բնակավայրերի նպատակային նշանակության ընդհանուր օգտագործման հողերի գոտիներում:

ՀՀ կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի հ.1023-Ն որոշմամբ հաստատված հավելվածների՝ ըստ տարածագնահատման համաձայնեցված սխեմայի գտնվում են 6-րդ գոտում /ծածկագրեր՝ 01-001-0022-0001, 01-001-0022-0038, 01-001-0022-0107/:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 37-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ, 60-րդ և 20-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 52-րդ և 59-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի հ.1023-Ն որոշմամբ, հաշվի առնելով ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի հ.01/11.1/10808-2026 գրությունը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության հ.Ն/48717-26 եզրակացությունը.

1.Սահմանել, որ Աջափնյակ, Արզումանյան փողոց հ.10 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող՝ 01-001-0022-0001, 01-001-0022-0038, 01-001-0022-0107 կադաստրային ծածկագրերով հողամասի մակերեսը կազմում է 3896.0քմ, որի սահմանները որոշվում են սահմանված կարգով հաստատված հատակագծով:

2.Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 10-ի հ.204-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագծի համաձայն՝ Աջափնյակ, Արզումանյան փողոց հ.10 հասցեում գտնվող, 01-001-0022-0107 կադաստրային ծածկագրով 969.45քմ մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը սահմանել բնակավայրերի, իսկ գործառնական նշանակությունը /օգտագործման նպատակը/՝ բնակելի կառուցապատման, իսկ 01-001-0022-0001 և 01-001-0022-0038 կադաստրային ծածկագրերով 2926.55քմ մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը սահմանել բնակավայրերի, իսկ գործառնական նշանակությունը /օգտագործման նպատակը/՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի հ.1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի և 4-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ բնակելի կառուցապատման, որը չի դասակարգվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին:

3. Ընդունել ի գիտություն, որ սույն որոշումը ենթակա է պետական գրանցման՝ ՀՀ կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:

4. Որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

5. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության ու անշարժ գույքի կառավարման վարչությունների պետերի վրա:

6. Որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ 